3. ՄԱՐԴԱԿԵՐ ՊԱՌԱՎ

Կէղնի հեր՝մ ու յոթ տղա ուրեն։ Պզտիկ տղի անուն կէղնի Մոսե, մեկել տղեկներուն չըմ գինա։

Ամուր մեկ էդ տղեկներու հերն է կհիվընդնա, կընկնի օլում դոշակին, կկանչե զտղեկներ, թանբիհ կէնե ու կցուցու։— Լաո, էդա ճամբով չէրթաք, էդա ճամբով կէրթաք։ Զըզիկ կնիկ կբերեք, էն լե մեկ տնե, էղնին յոթ քուր, օր իրարու վատ ու գեշ չասին, խոշխոռութեն չհ՚ընկնի ձըր տան մեշ։

Մարդն է, կհ՚ընկնի մեռնի, զյոթ կիտան, կընցնի ժում ու ժամանակըմ. տղեկներ կէլնին կանին ճամբու գլուխ, ուրանց ախչիկ կփնառին ու կնկնեն էն ճամբու հետ, օր ուրանց հեր ասեր էր՝ մ՚էրթեք, կէրթան։

Մոսին կվերու կասե.—Աղրբրտանք, մըր հեր մեռնելու ատեն մզիկ մեռելի օսիաթ-ամանաթ էրեց, օր էդ ճամբու հետ չէրթանք, հ՚որի՞ կէրթաք։

Մեծ աղբեր կվերու կասե։— Աղբեր, կուզես դու մի գա,— հերն ուրեն է ասի, մեռնողի ետև ո՞րն է կմեռնի, ես էդ ճամբու հետ կէրթամ, պելքիմ յոթ քուր էդա ճամբու հետ կէղնին։

Կընկնեն էդ ճամբու հետ ու կէրթան։ Պզտիկ աղբեր կտեսնա, օր ուր աղրբրտանք գացին, ինք մնաց թաք, կընկնի ետև ուրանց, կէրթա։ Կասե. «Զէղնի զթարկ ուրանց իտամ, մեղք ուրանց վիզ, մեռան՝ ես լե հետ ուրանց կմեռնեմ, սաղ մանցին՝ ես լե սաղ հետ ուրանց կմնամ, կիգամ իմ տուն»։

Շատ գացին, քիչ գացին, գացին պառվու մը դուռ կանան։

Պառավ օր տեսավ զէդոնք, ասաց.—Զըր գլխուն-արևուն մեռնիմ, հ'ու՞ր կէրթաք։

Յոթն աղբեր ասին թե.—Մըր հեր մեռնելու ատեն օսիաթ է էրի, օր մեկ տնեն յոթն ախչիկ գտնանք ու առնենք։

Պառավն ասաց.— Հրամեք, մտեք ներս, յոթն ախչիկ ընծիկ կա։

Մովսեսն ասաց.— Աղրբրտանք, արեք էրթանք, մը մտնեք հ'ոդի։

Անկաշ չէրին, մտան պառվու տուն։ Տեսան օր յոթն ախչիկ նստուկ են, ամեք ուր հունդուֆին. մեծ ախչիկն առավ զմեծ տղեն, էնղոր պզտիկ՝ զէնգոր պզտիկ. չուրի հ'ըմնու պզտիկ մնաց Մոսեին։

Պառավն է, բերեց յոթ տարվան գինին դրեց տղեկներու ու ախչըկներու առջև ու սկսան ըստաքան վըր ըստաքընի դարդկել, հ'ընկած են իջու դրախտ։ Աղեկ մը խմեցին, Մոսեն մենակ չխմեց, ինչ օր կիտեն ուրեն՝ կմիամտցուր, թալեր ետևանց։

Հ'իրկուն օր էղավ, ըստ հաղ հացի սուֆրեն բերեց պառավ առջև ուրանց։ Ասաց.—Բացվի, սուֆրա։

Սուֆրեն բացվավ, տեսան օր ինչ թուելու եմակ օր ասես, մեջն է։ Կերան ուրանց հաց ու թըլմըշան հ'ընկան։ Պառավ ելավ էձգեց զէդոնց տեղրանք, յոթ տեղ տղեկներուն էձգեց, յոթ տեղ լե ախչկներուն, ամեք մարդ հ'ընկավ ուր յաթխեն ու խըռաց։ Մինակ Մոսեն էր, օր զյորզան քաշեր էր գլուխ ու սուտ ու մուտ քուն էր դրե զինք. ու իսկի էզած բա՞ն էր, Մոսեին քուն հ'իգեր։

Մոսեն է, գողտուկ մը զյորզան ծըրպեց, յորղնի տակեն իշքեց, տեսավ օր պառավ ելավ գնաց դուրս, զակռեք կսրե, օր հ'իգա զարթեցու զախչկերք, ելնին զյոթ աղբեր լե ուտին, չունքի յոթ լե մարդակեր են։ Խոշամազ Մոսեն տեսավ, օր պառավ ելավ գնաց, զիրեք աղբեր էրեց մեկ թայ, զիրեք աղբեր լե մեկ, քաշեց ձիրմ դուրս, թալեց ձիու վրեն, զյոթ ախչիկ լե բերեց դրեց աղբըրտոց տեղ, յոլ ալահրն յոլի դըր*, հ'ընկան ճամբախ։

Պառավն է, էկավ գիտցավ տղեկներն են, յոթ ախչկա գլուխ կտրեց, քիչ մը պառկավ քնավ, ելավ օր հ'իմցու զախչիկներ, ելնեն զյոթ աղբերն ուտեն, հեչ քուն կիգա՞. ելավ օր զախչիկներ հ'իմցու, տեսավ օր տեղի մեջ ախչիկ չկա։ Բացեց զտղեկներու տեղ, տեսավ օր յոթն ախչիկ լե դրուկ են տղեկներու տեղ, յոթի գլուխ լե կտրուկ։

Ցքրավ պառավ ինքն ուրեն, թե. «Զէգի որն է էրի, ո՞րն է չէրի. էն պզտիկ աղբոր՝ Մոսեի բանն է»։ Ելավ հ'ընկավ ետև։

Շատ գնաց, քիչ գնաց, էդ է օր հասվեհաս է, կհասներ Մոսեին։ Էդ ճամբու վրեն լե կարմունջ մը կեր, պառավն ահտ ու խըրատ էր էրի,

* Ճանապարհը ասածու ճանապարհն է (Թ. Բ.)։

օր էն կարմունջի վրայով չընցնի։ Մոսեն ընցավ կարմնջի էնդիի գլուխ, պառավ մնաց կարմնջի էսդիի գլուխ։ Պառավն վերուց ասաց.—Հա՜յ, Մոսե, զմիսդ ուտեմ, զարունգ խմեմ, վահտ եմ էրի, օր էգ կարմնջի վրայով չընցնիմ, թե չէ զքու մեծ կտոր անկաճդ կթողենք։

Մոսեն ասաց.— Դու գնա, ես գիմ էրածն էրի, եբ հ՚ընկա քու ձեռք, ինչ կուզես էրե։

Մոսեն գնաց ուր տուն, պառավ լե՝ ուր տուն։

Աղրբրտանք ելան լուսուն, հ՚իմցան, տեսան օր էդա ուրանց տուն. «Ջանըմ մենք հ՚իրկուն հ՚ու՞ր էնք, հըմկա հ՚ու՞ր էնք, կա չկա զէդ բան Մոսեն է էրի մըր գլուխ, ուր առած գեշ էր, վերցուցեր է զմզիկ բերի թալի հ՚ոդա, օր չառնենք զէն ախչրկներ»։ Աղրբրտանք ասին. «Իմալ էնենք Մոսեի գլուխ, օր զմըր հայիֆն առնենք»։

Մեծ աղբեր ասաց.—Դուք լախա չունիք, ես կէրթամ մատնեմ թագավորին, տանեն հոգով մարմնով կորցուն։

Աղրբրտանք ասին.— Իմա՞լ կմատնես։

Ասեց.— Ես գինամ, իմալ կմատնեմ։

Ելավ գնաց թագավորին ասաց.— Մեծ աղբեր, ֆլան տեղ պառավըմ կա, չինարի մը ծառ կա ուր դռան հ՚առջև, ասըլ էնի թագավորի խաս պաղչին է լայեղ։

— Զէգի ո՞ր կբերե, ո՞ր չբերե։

Մեծ աղբերն ասաց.— Զէդի մինակ իմ աղբերն Մոսեն կառնա բերե, հոնկուց փրթնի, ուրիշ մարդ չկանա բերե։

Խոջամազ թագավորն է, կանչեց զՄոսեն, ասաց.— Մոսե, լսիր եմ ֆըլան պառվու դուռ ծառ-չինարըմ կա, կէրթաս կառնես, կիգաս։

Մոսեն ասաց.— Թագավոր ապրած, գլխուդ ու արևուդ մեռնեմ, էնի մարդակեր է, չըմ կրնա բերի, ուրիշըմ ղրկե։

Թագավորն հեչ անգաճ կէ՞նե։— Մեռնիս լե, կբերես,— ասաց։

— Հըմալ է,—ասաց Մոսեն,—քենե կուզեմ կացի մը օր արծըլու նման կտրե, գրոսիմ ծառու վրեն փրցում ու ձիրմ, օր էրթամ բերեմ։

Քոռ օլսըն յողսըզութեն*, թագավորին չկա՞ ձի։

Ասաց Մոսեին.— Գնա քըզիկ ձի մը հնգրե, առ զքու հ՚ուզածի կացին ու գնա։

Մոսեն առավ զկացին, քաշեց զձին, հեծավ ու քշեց։ Շատ գնաց, քիչ գնաց, գնաց պառվու դուռ կանավ։ Անկաճ դրեց, իշքեց, օր պառավըն է նստեր է մեկ ձենք զյոթ ախչիկ գիլա, մեկ ձենք զՄոսեն ու կասե.— Ա՜խ, Մոսե, դու հ՚ընկներ իմ ձեռք, զմիսդ կուտինք, զարունգ կխմենք։

---

* Կուրանա կարիքը (Թ. Բ.)։

Մոսեն է, դրրսևանց աղեկրմ զրոզեց զդուռ պառվու վրեն, կտրեց զծառ, վերուց գրեց վրը ձիուն ու քշեց։ Պառավ գեժդանգեժ կռահեց, ելավ հ՝ընկավ ետևեն։ Շատ էկավ, քիչ էկավ, տեսավ օր Մոսեն հ՝ընցավ կարմընչի էնգին, ինք լե մնաց մեկել դին, էկավ կարմնչի գլուխ կանավ ու ասաց.—Հա՞յ Մոսե, զմիսդ ուտեմ, զարոնդ խմեմ, զյոթ ախչկա գլուխ կերար, ծառ չինարուն կերար, էլ զի՞նչ կիդաս տանես, վահտ իմ էրի զէդա կարմոնչ չրմ հ՝ընցնի, թը չէ՝ ես գինենք, ինչ կենենք։

Բերեց զծառ չինարին տնկեց թագավորի պաղչի մեջ ու ինք թողեց էկավ ուր տուն։

Խոշամազ աղրբրտանք լուսուն տեսան, օր Մոսեն սալամաթ փրթեր է էկի, ելան գացին մեկ լե մտանեցին թագավորին, ելան գողբրդան դողրի քշեցին գացին թագավորին վեցն աղբեր, ասին.—Էդ պառվուն հրմալ սուֆրե մը կա, օր ասե՝ բացվի, կբացվի, ասել թագավորին լայեղ է, ինչ եմակ ասես մեջ հազբր է։

— Զէգի ո՞ր պիտի բերե, ո՞ր չպիտի բերե,— ասին։

Վեց աղբերն ասին.— Մբր աղբեր Մոսեն օր չբերե, ուրիշ մարդ չկրնա բերե։

Կանչին զՄոսեն, բերին։ Թագավոր վրեն գրեց.—Իլաի էգ պառվու հացի սուֆրեն կէրթաս բերես։

Մոսեն ասաց.— Թագավոր ապրած, էգ պառավն մարդ կուտե, ես չրմ կրնա էրթա բերի, օզորգ օր ըզծառ գացի բերի, ծառն դուրս էր, զդուռ ըոզեցի, կտրեցի, առա էկա։ Սուֆրեն ներս դրուկ է, ներսով ներս, ես իմալ էրթամ բերեմ։

Թագավորն ասաց.— Ես չրմ դինա, թե օր չէրթաս բերես, զգլուխդ կզարկեմ։

Մոսեի ճար կտրավ, ասաց.—Ես իմ թագավորից հրմալ մատնիքրմ կուզեմ, օր ինչ ասեմ, զիմ խոսկ կատարե, սորա կէրթամ բերեմ, թը չէ՝ չրմ էրթա։

Թագավորին բա՞ն կպակսի, գտավ զմատնիք, առավ բերեց տվեց Մոսեին։ Խոշա Մոսեն է, առավ զմատնիք, էձգեց մաս։ ու հ՝ընկավ ճամբախ։ Շատ գնաց, քիչ գնաց, գնաց պառվու դուռ կանավ։ Կանավ, անկաճ էրեց, տեսավ օր պառավ նստեր է մեկ ձենք զյոթ աղչիկ գիլա, մեկ զչինարի ծառ, մեկ լե զՄոսեն ու կասե.—Մոսե, դու իմ ձեռք հ՝ընկներ, զքու միս կուտենք, զարոնդ կխմենք։

Մոսեն է, զարկ աքցի մը գռան, դուռ գնաց առավ պատ ու մտավ ներս։

— Հա՞յ,—ասաց պառավ Մոսեին,—զմիսդ ուտեմ, զարոնդ խմեմ, զքզիկ ճրագով կփնտռենք, լուսով գտա։

Հեռի լսողաց մոտեն, Մոսեն վերուց ասաց.—Քաք հեր, անոթից մեռա, հեղրմ րի զքու սուֆրեն, կուշտ հաց ուտեմ, ինչ դինաս՝ էրե, էլ քու ձեռքեն ես հ՝ուր կխըլսիմ։

Պառավ ավտրցավ, ելավ բերեց սուֆրեն, դրեց Մոսեի առջև, օր հաց ուտեր։ Ինք լե նստավ Մոսեի հ՝առջև, զակռեք կսրեր, օր Մոսեն ուտե հաց խըլըսի, հ՝ելնի զՄոսեն ուտե։

Մոսեն թռավ ասաց, հեռի լսողաց մոտեն.—Շրն հեր, զընդան հոնա է, էլի հ՝իջի գնա զընդան, սրե քու ակռեք, էդա տեղ նստար, կսրիս, ես լե կրնա՞մ հաց ուտիմ, վախենելուս սիրտս էղավ կորեկի մը հատ։

Պառավն է, ելավ գնաց զընդան։ Մոսեն հանեց զմատնիք, դրեց գետնի վրեն, վերուց սուֆրեն ու թռավ դուրս։

Պառավ պոռաց.— Մոսե, հ՝ի՞գամ։

Մատնիքն ասաց.— Դրռ կուշտ չրմ կերերի։

Մոսեն զուր ճամբախ կտրեց։

Պառավ մեկ լե պոռաց.—Հ՝իգա՞մ։

Մատնիքն ասաց.— Էկո։

Պառավ եր ելավ կէրթեր, մատնիք հոնկուց ֆրռ, էկավ մտավ Մոսեի մատ։ Պառավ ելավ տեսավ, օր նե Մոսե կա, նե սուֆրա։

Պառավ հ՝ընկավ ետև, էկավ կարմընջի վրեն հասավ, տեսավ օր Մոսեն հ՝ընցեր է կարմնջի էնդիի գլուխ, կաներ է։ Պոռաց, ասաց.— Հա՜յ Մոսե, զմիսդ ուտեմ, գարունդ խմեմ, յոթն ախչկա գլուխ կերար, ծառչինարու գլուխ կերար, հրմկա լե սուֆրի գլուխ կերար, թը հ՝ընկար իմ ձեռք, մեծ կտոր անկաճդ կթողեմ։

Պառավ դարձավ գնաց, ինք առավ զսուֆրեն, բերեց թագավորի հ՝առջև դրեց։ Թագավորն օր տեսավ զսուֆրեն, ասաց.—Բացվի։

Բացվավ, տեսավ օր ինչ թուղու եմակ ասես, մեջն էր։ Խոջա վերցուց սուֆրեն, դրեց մեկ դին, Մոսեն թողեց էկավ ուր տուն։

Աղրբրտանք տեսան, ասին.—Մեկ լե փրրթավ էկավ, լուսուն կէլնիք, կէրթանք մեկ լե կմատնենք։

Լուսուն օր էղավ, վեց աղբեր մեկ լե ելան, գացին կանան թագավորի առջև ու ասին.— Թագավոր ապրած, դու չասես, էդ սուֆրի տիրոջ հրմալ պառավրմ կա, ասըլ թագավորական լայեղ է։

— Ո՞ր պիտի բերե, ո՞ր չպիտի բերե զէդ պառավ։

Աղբրրտանք ասին.— Մոսեն կբերե, էլ ուրիջ մարդ չկարնա բերե։

Թագավոր կանչեց, բերեց զՄոսեն, ասաց.—Մոսե, ես զէդ սուֆրի տեր պառավ քինե կուզիմ։

Մոսեն ասաց.— Թագավոր ապրած, գլխուդ, արևուդ մեռնեմ, էդ ի՞նչ բան է, կուզես հիսնե, էդի մարդակեր է. բան չէ, որ մարդ երեսին իշքե։

— Ջրմ գինա, պիտի բերես, թը չէ՝ գլուխդ կէրթա։

Էլ ի՞նչ ճար կա. Մոսեն ասաց.— Կբերեմ. քինե տաս-տրսնհինգ հատ մանդր զանգուլակ կհ՝ուզիմ, հոխե մը կարբիծա, հոխե մը սև ձութ, ջրրիտ մը ու չակմաճե մը, օր էրթամ առնեմ, հ իգամ։

Էդոնք է զօր թագավորի մոտ. հրաման էրեց շուտ մը առան էկան, տվին Մոսեին։

Մոսեն է, հ՝իրկուն օր էղավ, ելավ զուր հ՝ուզած բաներ լցուց չակմաճի մեջ, շալկեց, հ՝ընկավ ճամբախ։ Շատ գնաց, քիչ գնաց, գնաց պառվու երդքի վրեն կանավ։ Տեսավ օր պառավ նստուկ է, մեկ ձենք զյոթ ախչիկ գիլա, մեկ ձենք ղծառ-չինարին, մեկ լե սուֆրեն ու կդառնա կասե.—Հա՜յ Մոսե, դու իմ ձեռք հ՝ընկներ, միս կուտենք, զարունդ կխմենք, զմեծ կտոր անկաճդ կթողենք։

Մոսեն էձդեց զանգուլկըներ գլուխ ու երդքի վրեն աղեկ մը թոթվեց զգլուխ։ Պառավն օր տեսավ զէդի, ասաց. «Հիսոս Քրիստոս, չարեկ, չարխափանեկ»։

Մոսեն երդքի վրայեն ասաց.— Քաշք, ես Գաբրել հրեշտակն եմ, էկեր իմ զքու հոգին առնեմ, էն լե երդքեն կհանեմ, շատ չերկնցունք։

Հ՝իշուց ղչաքմաճեն Մոսեն երդկեն, ելավ պառավ մտավ չաքմաճի մեջ, խփնեց զբերան, հանեց երդկեն դուրս։ Թամուզ մը շարեց զմրխեր, շալկեց ու ելավ հ՝ընկավ ճամբախ։ Ճամբու հետ օր կէրթեն, Մոսեն հարցուց պառվուց.— Պառավ, էդ ի՞նչ տեղն է կէրթանք։

Պառավն ասաց.—Գլխուդ ու արևուդ մեռնեմ, Գաբրել հրեշտակ, ես ի՞նչ գինամ, ինչ տեղն է, ել ու գըլխվեր է. կէլնիք, կիշնիք։

Իշավ ճամբու վրեն, մեկ լե հարցուց պառվուց.—Պառավ, էդա ի՞նչ տեղն է, կիշնիք։

Ասաց պառավ.— Ջրմ գինա, գլխուդ ու արևուդ մեռնեմ, էդի դուրան է։

Էկան ըստ հաղ կարմնջի վրեն։

Մոսեն հարցուց.— Պառավ, էդա ի՞նչ տեղն է։

Պառավն ասաց.— Ջրմ գինա, դարրմ էր, ելանք։

Մոսեն ասաց.—Էդ կարմնջի վրեն է։

Նոր պառավ հասկցավ օր Մոսեն է։

Ասաց պառավ Մոսեին.—Մոսե, զյոթ ախչրկներու գլխըներ կերար, ծառ-չինարուն կերար, սուֆրեն կերար, հրմկա լե զիմ կերար, բան չէզնի, դու տար, տես իմալ զքու թագավորի գլուխն ուտեմ։

Մոսեն շալկեց, բերեց գրեց թագավորի տախտ, ինք լե փախավ գնաց, յոթ սարու ետև շաղցի մը քարու ծակ մտավ։

Թագավորն է, օր բացեց զսընդկի բերան, պառավ հու էրեց, բոլոր աշխարհ հ՝ընցավ ու մարդիկ հ՝ընկան, մեռան։ Պառավն էլավ էնգին

զարկվավ, էնդին զարկվավ, զՄոսեն չգտավ, էկավ տեսավ օր մտեր է ջաղցի քարու ծակ։ Ասաց.— Հա՜յ Մովսես, զմիսդ ուտեմ, գարունքդ խմեմ, ելի տես ինչ եմ էրի զքու աշխարք, մարդ չմնացեր է, դու իմա՞լ ես էկի էդա տեղ մտի։

Ասաց.— Քիչ մը սապոն գտա գետի պռուկ, սապոնեցի զիմ գլուխ, էկա մտա էդա տեղ։

Պառավն ասաց.— Էդտեղ չկա՞, կա, քիչ մը սապոն լե ընծիկ տուր։

Տղեն ասաց.—Առ։

Պառավն ասաց.—Քիչ մը լե տուր։

— Հան առ,—ասաց Մոսեն։

Պառավն աղեկ մը փրփրցուց զուր բըբռեճ ծամերն ու բերեց մտուց ծակ, էլ ինչքան էրեց նը կրցավ ետ քաշել, նը հ՝տռաշ էրթալ։

Մոսեն ելավ, քաշեց զթուր օր գլուխ կտրեր, պառավ ասաց.— Մոսե, կանի, քզիկ բանըմ ասեմ, սորա զիմ գլուխ կտրե։ Իմ սրտի մեջ գունդըմ մաղ կա, կհանես կտանես քու երկիր, կծխես, հանդե կսաղանան։

Մոսեն կտրեց զգլուխ, ճղեց զպառվու սիրտ, հանեց զպառվու սրտի գունդ, տարավ ծխեց թագավորի հ՝առջև, ճըմըղկաց, ելավ նստավ։ Ասաց.—Ինչքա՞ն եմ քնի։

Ասաց.—Տնավեր, ի՞նչ քնել է, սև քնել է էկի, պառավն հ՝ընցուցեր էր զէդա աշխար, զպառավ սպանի, գունդըմ կեր ուր սրտի մեջ, հանի բերի, ծխեցի, սորա սաղցաք։

Թագավորն ասաց Մոսեին.—Հ՝ուզե, իտամ։

Մոսեն ասաց.— Քինե կուզեմ վեց խետր արճիճ, օր կապես իմ վեց աղրբրտոց վիզ, թալես ծով ու վազիրի ախչիկ։

Անմիշապես թագավոր հրաման ըրավ, օր վեց խետր արճիճ բերեն, կապեն Մոսիի աղբբրտոց վիզ, թալեն ծով։

Եր զաղբբրտանք թալեց ծով, ըստ հաղ հրաման էրեց, օր Մոսեի ու վազիրի ախչկա հարսնիք բռնեն։

Ցոթն օր զարկին ու խաղցան։

Ըտոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։